



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ

ՆԻՍ Ա.

2 ՅՈՒՆԻՍ 1878



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻԲԱՅԷԼԵԱՆ

1878

ՄԱՅՐ ԴԻՒՆ

Ստեփան Արարանեան	փաշա	Ա.	ԱՏԵՆԱԳԵՏ
Տիգրան Առաւփեան	էփէնտի	Բ.	"
Նարեան Եղիշեան	էփէնտի	Գ.	"
Համբարձում Ս. Ալաճաճեան	"	Ա.	ԱՏԵՆԱԳԵՐ
Մկրտիչ Մեջրեան	"	Բ.	"
Տէրպեց Ստոյլ	"	Գ.	"

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ա.

2 ՅՈՒՆԻՍ 1878

ՆԱԽԱԳԱՀ. — ՔՄԵՆ. Տ. ՆԵՐՍԷՍ Ս. ՊԵՏՐՈՍԻ ԶԱՅՐ  
ԱՏԵՆԱԳԵՏ. — ՆՈՒՐԵԱՆ ԷՃԷՆՏԻ (Գ. Սուրենապետ)

ԱՁԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՔ  
ԵԿԵՆՆԵԱԿԱՆՔ

- 1 Խորէ Արքեպիսկ. Նար. Պէլ Բ.
- 2 Կարապետ Եղիշի. Սերոբեան Բ.
- 3 Մատթէոս ,, Իգմիրլեան
- 4 Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց
- 5 Գարեգին ,, Թաթարեան Բ.
- 6 Էղիշի ,, Ասրազունի
- 7 Խորէ ,, Կիրոյեանց
- 8 Հմայեակ ,, Գեմարեան Բ.
- 9 Եղիշեան ,, Փարսազեան
- 10 Ներսէս ,, Ասլանեան Բ.
- 11 Պօղոս ,, Խօլատեան Բ.
- 12 Արիստակէս Բ. Մամբրեան
- 13 Գէորգ ,, Արծրունի Բ.
- 14 Գրիգոր ,, Աճմեան Բ.
- 15 Խորէ ,, Փէլէլիվանեան Բ.
- 16 Երանտիս ,, Արքայեան
- 17 Եղիշեան ,, Մկրտիչեան
- 18 Ստեփան ,, Ստեփանեանեան
- 19 Սահակ ,, Տ. Սարգսեան
- 20.

ՔԵՐԱՐԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գումրակ, Էղիշի փաշա և  
Գումրակի դուրս

- 21 Գրիգոր Պէրզեան Բ.
- Բ. Բարսեղյանի անաչին
- Բ. 2 Բարսեղյանի երկրորդ
- Բ. Պ Բարսեղյանի բանաւոր պատճառ

- 22 Գէորգ Ստեփանեան Բ.
- 23 Խորէ Մանուկեան Բ. Պ
- 24 Կարապետ Աղաբաբեան
- 25 Համբարձում Մաղապիտեան
- 26 Մեծա Գալուստեան
- 27 Եղիշեան Պարսեան
- 28 Ն. Մէլգոյրեան Տօրթօր Բ.
- 29 Պօղոս Պատեանեան
- 30 Սարգիս Աղաբաբեան
- 31 Սահակ Աղբօ
- 32 Աննայի Մանուկեան Բ. Պ
- 33 Փէլէլիվանեան Տօրթօր Բ. Պ
- 34 Բարսեղ Քիւրքեան
- 35 Երանտիս Յիւրեան
- 36 Աստուծ Տէրպեց
- 27 Գէորգ Աղաբաբեան  
(Բ. Վիճակ)  
Պէլիլիվան
- 38 Աղաբաբի Էղիշեան
- 39 Աղաբաբ Ստեփանեան Բ.
- 40 Բարսեղ Հարսեան  
Էղիշեան
- 41 Զարեհ Քիւրքեան Բ.
- 42 Մկրտիչ Քիւրքեան Բ.
- 43 Պօղոս Ժամակոչեան Բ.
- 44 Սեպուհ Մաղապիտեան Բ.
- 45 Թաթար Պէլեան Բ.
- 46 Արմեն Յիւրեան Բ.
- 47 Գրիգոր Գրաւորեան Բ.
- 48 Ստեփան Արքեան Բ. Պ

- Խոսկիսար Ս. Կարապետ Բ.
- 49 Մեծա Պարսեան Բ.
- 50 Պօղոս Թորթօրեան
- 51 Նիկողոս Ալաճաճեան Բ.
- 52 Տրդատ Փարսազեան
- (Գ. Վիճակ)
- Բ. Բ. Պ
- Գումրակ փաշա
- 53 Արքի Ռեանեան Բ.
- 54 Գրիգոր Աղաբաբեան Բ.
- 55 Մարտիրոս Յ. Տիլեան Բ.
- 56 Միքայէլ Մամբրեան Բ.
- 57 Ներսէս Քարապետեան Բ.
- 58 Ստեփան Խոսկիսար Բ.
- 59 Տեղեմար Մ Էղիշեան Բ.
- 60 Խորէ Զարեան Բ.
- 61 Երանտիս Նորատեան Բ.
- 62 Գրիգոր Մարտիրոսեան Բ.
- Միքայիլ Բ.
- 63 Կարապետ Պ. Պէրզեան (Վիճակ) Բ. Պ
- 64 Երանտիս Կարապետեան Բ. Պ
- 65 Երանտիս Պ. Նորատեան Բ.
- 66 Տիլեան Կարապետեան Բ.
- 67.
- Պէլիլիվան և Գարսիս Բ.
- 68 Յ. Մեծա-Գումրակ  
(Գ. Վիճակ)
- Գումրակ և Խոսկիսար Բ.
- 69 Եղիշեան Էրանտեան Բ.
- 70 Ստեփան Պէլիլիվան Բ.

Գ Ս Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Ե Ր Ե Ս Փ Ո Ւ Ս Ա Ն Բ	Մ ա շ
71. Կարապետ Շահապետյան	121. Ստեփան Պ Պ. Փարապետյան Բ Պ
72. Մկրտիչ Մուրադյան	Տ/վրիկ
Հարյըզափու	122. Նշան Գարապետյան
73. Յակոբ Ելմկրեան	Զևյուրեկ եւ Մարայ
Էնիսանաղէ Սամարիոյ	123.
74. Օղակն Խոճասարեան (Վ. Խոճեան)	Տրսայիցոն
Թովիգափու	124. Տիգրան Տ. Ներսէսեան Բ
75. Յովհաննէս Մարգարեան	Պարտաւտ
Էյուս Ս. Էղիա եւ Ս. Աստուածատրիս	125. Մեղքոն Իսկըտէրեան Բ
76. Գարեգին Յ. Մելիքեան	Տիգրանակերտ
Գարու շիւմէ	126. Միշքան Չարսեան
77. Աստիա Իկիտպաշեան	Վան
Հիւսար եւ Պյաճի գիւղ	127. Սիմոն Մարտոսեան Բ Պ
78. Յովհաննէս Նուբեան	Աղբրուար
Նոր գիւղ եւ Սրէնիս	128.
79. Ղազար Հովսեփեան	Հալէպ եւ Այնթապ
Պարտաւտ	129.
80. Մկրտիչ Գ. Էստեան	Սիրաստիս
81. Յովհաննէս Կրճիկեան	130. Մկրտիչ Յ. Մելիքեան
82. Թաղէոս Թեղբեանեան	Ռուսուիս
Քարակերտիկ	131.
83. Յարութիւն Զոմարեան	Կարս
84. Յարութիւն Գ. Տասեան (Ե. Վ. Եսայի)	132. Աբրահամ Ե. Այվազեան
Սամարիս	Զմեկանազ
85. Ալեքսան Պէշեքեան	133. Համբարձում Մարքելիշեան
86. Ա. Եսայի Բոլոբեան	Քարաւախ
87. Կարապետ Մելիքեան	134.
88. Մինաս Ճափնապետեան	Ատանա
89. Յակոբ Քարապետեան	135.
90. Յակոբ Ամասեան	Սըղիւրդ
91. Նազարէթ Շահապետյան	136. Մատթէոս Ազիբաճեան
92. Յարութիւն Թեղեան	Էօզդրատ
93. Յակոբ Առշակ	Մարաքիս
94.	Իզմիր
Խաղապետ	137. Լեւոն Պարեգեան
95. Աստուծոյ Ալիքոն Տիգրի	138. Գէորգ Վարդանեան
96. Խաչատուր Պ. Մարտոսեան	Իզմիր
97. Ռեթէոս Պէշեքեան	139. Պարթ Պարսեան
98. Արման Մելիքեան	Էզիպատս
99. Սարգիս Աբրահամեան	140.
100.	Յովհաննէս Յովակիմեան Բ

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Բացում Ժողովին Ի Ս. Նախագահէն  
 Բ. Կարգում ստժամեայ Գիւանի  
 Գ. Բնարուքին Մայր Գիւանին

Ս.

Բացում Ժողովին Ի Ս. Նախագահէն

Ս. մեն. Ս. Նախագահը բացաւ Աղբրին  
 Ժողովն յետագայ ճառով .

Տեախը Երեստիսեանք Հայոց Աղբին

Այս հինգերորդ անգամ պատիւ ունիմ բա-  
 նալ Աղբային Ժողովն անձամբ շատ տխուր  
 բաց հոգով լի յուսով : Անցեալ տարւոյն՝ այն  
 արիւնհեղութեանց եւ ստիպան տարւոյն սկիզբը՝  
 կը վարանէինք թէ արդեօք պիտի գտնայի՞րք այն  
 հանգիստը, զոր կը մտղթէինք ունենալ յետ  
 անցանելոյ ընդ ջուր եւ ընդ հուր . գոհութիւն  
 պար խորհրդական կարգեցինք, որ ուշի ուշով  
 եւ հաւատարմութեամբ իւր պաշտօնը կատարեց,  
 եւ կը կատարէ ցարդ, եւ եթէ Չեր հաւանու-  
 թիւնն ու հաճութիւնն ստանայ, այսուհետեւ ալ  
 պիտի կատարէ ոչ միայն խորհրդականի այլ եւ  
 զմեզ Տէր Աստուած ի հանդիստ :

Տարւոյն մէջ անցած վատալի դէպքերը յի-  
 շեւ հարկ չէ, սակայն ճշմարտութեան եւ շնոր-

հակաբաց պարտք մ'ունիմ կատարել թէ Չեր  
 եւ թէ բոլոր Ժողովոց եւ Խորհրդոց նկատմամբ  
 որ Չեր ազգասիրական պարտքը կատարելու  
 գիտակցութիւնն ունեցար : Ժողովներն եւ Խոր-  
 հուրներն այս խիստ դժար տարւոյն մէջ՝ ի-  
 բնեց նիստերը կաղմեցին եւ գործեցին, բաց յի-  
 նէն՝ որ քանի ամիսներ Պատրիարքարանէն բու-  
 ցակաց գտնուեցայ, այլ ոչ անգործ, Չեր  
 յայտնի պատճառաւ, եւ եմ ցարդ բացակայ,  
 եւ ինչպէս այսուհետեւ ալ այնպէս լինելու արտօ-  
 նութիւնը կը խնդրեմ ի Չէնջ, անձինս տկա-  
 րութեան պատճառաւ : Այս բացակայութեան  
 միջոցին՝ պատուական Խառն Ժողովոյ եւ իմ ու-  
 բոյնամբ Գեր. Միթիարեան Խորհն եպիսկո-  
 պոսը խորհրդական կարգեցինք, որ ուշի ուշով  
 եւ հաւատարմութեամբ իւր պաշտօնը կատարեց,  
 եւ կը կատարէ ցարդ, եւ եթէ Չեր հաւանու-  
 թիւնն ու հաճութիւնն ստանայ, այսուհետեւ ալ  
 պիտի կատարէ ոչ միայն խորհրդականի այլ եւ  
 Տեղապահի պաշտօնը, զի իր կարողութեան

փորձը ցցուց արդէն : Այլ յիշէ՞ք որ անցեալ նոյն տարի 25ին՝ յատուկ դրով մը հրաժարական տուի Ձեր պատկառելի Ժողովոյն , թերևս ասանկերոգն այն հրաժարականաց , որոց իններորդն դրով Բ. Գրան մատուցի նոյն Նոյեմբերի բակիցները՝ բերնով ի Բ. Գրանէ և դրով պատկառելի Ժողովը հրաման խնդրելով օգտափութեան համար գնալ այլուր , բայց չյաջողեցայ . . . ուստի պարտաւորեալ եմ նոյնը դարձեալ թախանձանօք խնդրել այսօր : Այս հրաժեշտներն որչափ որ այլ ընդ այլոց մեկնաին , և մինչև իսկ ծագրաին , հոգ չէ , զի եթէ մարդիկ չուզեն գիտնալ , Ստուած գիտէ որ ոչ պատասխանատուութենէ և ոչ գործելէ փախչելու համար է . ես ձեռքս սրտիս վրայ դրած՝ փաստահաւատութենէ կարող եմ ըսել՝ թէ պատրիարք չընտրուած ալ կաշխատելի , և աշխատեալ եմ ազգիս համար , և ցումն յետին դարձեալ պիտի աշխատիմ առանց անկախութեան առ ի մարդկանէ . բայց այս պաշտօնը այնչափ մանրամասնութիւններ ունի , որոցմէ ազատիչ կարելի չէ օգնականներ ունենալով հանդերձ . անգին կենտական խնդիրը՝ որ է դաստիարակութիւնը , իւր վիճակին մէջ կը մնայ միշտ , զի ժամանակ չկայ անով զբաղելու , մինչև իսկ աստղութիւն ալ եղած ըլլայ :

Ուստի մէկ կողմանէ շինել և միւս կողմանէ շինուածին աւերակները տեսնել՝ այս անտանելի և յոյժ ցաւալի է ինձ : Արթութիւնը տարածել , դարոցներ՝ բայց աղէկ դարոցներ շինել , այս է մեր ամենէն նախնական պարտքը , սա է խորիս փրկութեան ամենայն ժողովրդոց :

Եւ հիմայ՝ մանուսանդ հիմն՝ Տեարք Պատուականը՝ որ մեր ամեն շարժումներն և գործերը ի տիեզերս համայն կը հռչակուին , և հիմն՝ որ աշխարհի ամեն կողմ՝ Հայոց ազգին ընդունակութիւնները կը գրուատեն , և հիմն՝ որ ալ մտայնած չենք , ո՛հ այն անհանդուրժելի ստակալի մտայնումը վերջացու , և հիմն՝ որ Հայ ենք բսելու սկսան շտննալ անոնք՝ որ կամչնային երբեմն . . . դուցէ մեր մեղացը համար , հիմն որչափ ջանք , որչափ աշխատութիւն պէտք է այն հստակալ ընդունակութիւնները մշակելու :

ըստ տարածելու , և այս բանին համար ամեն միջոց ձեռք առնելու : Որեմն հետի՛ հետի՛ ծուլութիւնն , անտարբերութիւնն ի մէջ և ամեն Հայերէ , հետի՛ պատակումներ ոչինչ բաներու համար , հետի՛ սնտի տղայական և դատապարտելի կիրքեր , հետի՛ անգութ և շարանախանձ քննադատութիւնք զիրերոց և բժախնդրութիւնք , հետի՛ ատելութիւնք , անհաշտելի թշնամութիւնք , պախարակութիւնք , հետի՛ սուս գեղերսինում կրասկցութեանց և ջանք պատրելու և խարելու զմիամիտս , հետի՛ զշարութիւնք , ամեն տանն , մանուսանդ հոգի առնելու տալու ժամանակներու մէջ , հետի՛ գժուձ փորքուրութիւն և շարակամութիւն , հետի՛ ի մէջ նաև շարակամաց կարևորութիւն տալն մեր անձանց ու իցէ գործի համար , այլ ընդհակառակն պէտք է ունենամք անխարդախ և ճշմարիտ և ոչ չարտեալ սէր միսեանց վրայ , շրջահայեցութիւն , լուրջ խորհուրդ , անքակտելի միութիւն՝ քանդի անցեալը կը ցուցնէ՝ որ մեր Անիներ , ծաղկեալ քաղաքներ և հզօր թագաւորութիւններ ունեցած ենք , և այս անիժարարտ կիրքերով կործանած ենք , այո՛ , մենք կործանած ենք , ընդ միշտ վերականգման համար զիրար գործելու անկարող ընելով՝ շարակամութեամբ , քրտութեամբ , և լազնից լայն սասարկզը միայն բացած եմք մեր սաղև անարգել , և ահա՛ ամեն բան կորուած և իրուամբ լալիանութիւնը ժառանգած ենք , և այն ժամանակն ի վեր է որ պարծանօք իրարու կը ցուցնեմք թէ ո՞վ բան զո՞ աւելի աղէկ կողրոց և կուլոց . . .

Պէտք է ուրեմն ի բաց քեցենք նախաձեռն շարակամութիւնը և դատապարտելի ետութիւնը Ազգք սիրենք և ազգասիրոց շուրջը բոլորելով՝ ոչ թէ խոչընդոտն և խախտարար և զանազան ճարտարամիտ և շարահմար մեքենայութեամբ անոնց գործը հիմն խելր տալալելու , զոր կընենք շատ անգամ , և զիտէք ինչ նարտակալ , անիժից ծնունդ ծաղր մը , հեղնութեան նիւթ մը , անիժեալ յազմանակ մը կորզելու վաստակելու համար , զանի կամ զանոնք անկարողութեան դատապարտելով : Ոչ , ոչ , ալ այսուհետե պէտք է բուրիւր Ազգք սիրու

ներուն շուրջը՝ օգնելու համար նոցա . ամէն մարդ պէտք է ինքզինքը մտնայ և Ազգք մտածէ այսուհետե , գործող ձեռաց նեցուկ ըլլանք , մտածող մտայ՝ աղատութեան և յատաճողիմութեան ազատ սասարկզ բանանք : Մեր եկեղեցականքս նախ յատաճողիմութիւնը շարգիլենք ոչ յանուն կրօնից և Աւետարանի , որ ծնողն է յատաճողիմութեան և որով նախ մեր կրօնը հետի կը պահենք այսին կատականաց լինել , և աշխարհի ալ կը ցցնենք թէ ամէն աղէկ բան , ամէն քաղաքակրթութիւն և լուսաւորութիւնք զիսովին ճառագայթին է անուրանալի Յիսիսէմի այրին մէջ կէս գիշերին ցրացող սուտուածային լուսոյն , այո՛ . նախ մեր եկեղեցականքս օրինակ հանդիսանալով հանդարտութեան , անխառնութեան , միաբանութեան , մեծ և Ստուածային սիրոց եղբայրութեան , ներողամտութեան , անյիշաչարութեան , արթնութեան , ճշմարտասիրութեան , անշահախնդրութեան , համբերութեան , վերջապէս քրիստոնէական և ազգային առաքինութեանց , և միշտ իբրև լուսաւոր սխն ընթանալով՝ ազգին ուղիւն , ոչ մեր անձանց այլ Ազգին համար վառուելով ըստ տալու ասնն : Այո՛ , գժուար կացութեան մէջ եզոզ ժողովրդի մը գժուարասալաշտն առաջնորդներն ենք , ո՛ր կերթոց ժողովուրդն երբ մեր զմեզ զահալիմութեանց մատենէք : Առաջնորդին ամենէն մեծ քաջութիւնը կիրքք և ինքզինքը զսպելուն մէջ է , ամէն բան ըսել , ամէն քարը տեղը դնել այդ կուտղներու գործն է , հասցա ո՞վ պիտի հաշտեցնէ կուտղներն իրարու հետ , ո՞վ է հրեշտակն խաղաղութեան . . . զայս կը քաղեմ ես սուրբ Աւետարանէն , որ ունիցի ականջս լսելոյ լուրից , մի յողթիւր ի շարէն այլ յազմեալ բարեուն շարին . . .

Եկեղեցական և աշխարհական ամէնքս ալ միևնայն նաւակին մէջն եմք , վտճարիկները պատկաս չեն , ծովն ահեղամուտն կը տատանի , զըժտիւր , նաւակը կընկղմենք : Հասցա ի՞նչ պէտք է ընենք : Ձեռք ձեռքի տանք իրարու տիրութեանց օգնելով . ոչ որ է կատարեալ և անսխալ բոց ի յԱստուծոյ , ո՞վ որ զայս այսպէս չհաւատար՝ դատապարտեալ է իւր խղճէն : Մի-

այն մէկ բան մը կայ , որ ներողութիւնը , հաշտութիւնը , և միութիւնը կը զիրարացնէ , և փոխադարձ վստահութեան և անով գործելու սրիութեան կատաճնորդէ զմեզ , այն է սէրը . երբ սէր կայ , գոտղութիւն , ամբարտաւանութիւն չկայ , երբ սէր կայ , յատաճողիմութիւն կայ . շատերը կը կարծեն թէ վարդապետք սէր կը բարոզէ , բայց այն մեռելութիւն է , անկենդանութիւն է , խափանարար է յատաճողիմութեան . սխալ է այս : Սէրը վիճարանութիւնը վիճարանութիւն կը թողու , և անոր ծնունդը և յատաճողիմութիւնը և բարգաւաճանքը կը զիրարացնէ : Իսկ անսիրելիութիւնը՝ վիճարանութիւնը թիւնաւորելով ետութեան և ամբարտաւանութեան և ստակալի կամակորութեան կը տանի : Ընտարտութիւնն է այս : Մեզի սէր և եղբայրակցութիւն պէտք է , սիրով և ներողութեամբ պէտք է հասկցնենք իրարու թէ ամէնքս ալ ուսանելու կարօտ մարդիկ ենք , և մինչև իսկ մեր մէջն անոնց որ ամէն բան ուսած կը համարին և կը յամուտին , պէտք է հասկցնենք սիրով թէ տակալին շո՛տ բան ունին ուսնելու . իսկ եթէ հակաակողին զիրքը բանենք՝ սիրոց հակառակ զիրքը , զայն ուսնելէ շատ հետոս կը պահենք , քանզի վտխանակ՝ աղայս միայն գիտեմ՝ զի ոչինչ գիտեմք գրուցել տալու , զես գիտեմ՝ դու չգիտես սրտաստիանը մշանջենաւորապէս սխտի քաղեմք նորա բերնէն և զրիչէն , և երբ նորա միութենէն բարիք կը յուսայիր , նորա հակառակութենէն շարիք պիտի հնձես :

Պիտանակ կուտելոյ և ժարտելոյ՝ պէտք է ուսնիլ և ուսուցանել , քահանայն , վարդապետը , եպիսկոպոսը , պատրիարքը , կաթողիկոսը պէտք է ուսանի և ուսուցանէ այլոց : Լրագրապետն , այն հասարակութեան մէջ վստուած բացօթեայ ջահը՝ պէտք է ուսանի և ուսուցանէ . վարժապետն՝ այս երկրային նախախնամութիւնը՝ պէտք է ուսանի և ուսուցանէ . երեսփոխանը , ժողովականը , ժողովը , արհեստաւորը վերջապէս ամեն կարգի մարդիկ ուսնին : Ուսանիլ , ուսանիլ խոնարհութեամբ , միութեամբ և սիրով և ոչ յանձնադատանութեամբ . այս է յատաճողիմութիւնը : Աշխատիւնք ար-

դեպ այս բանին համար : Իրաւ շատ դպրոցներ ունինք և կաշխատինք , ոչ որ կարող է ուրաշաւ , բայց այս սկիզբն է աշխատութեանց : Պէտք է յարատեւենք , յարատեւենք , զի յառաջադիմութիւնը առճամն չունի կանգ առնելու : Մեր դպրոցները քիչ են , անբաւական են , աշխատինք շատցնելու , ամենքս ալ աշխատինք : Կը յուսամ որ այսօր հանդիսաւոր սխալ կրնէք այս բանին , կը յուսամ որ արդէն ունեցած դպրոցներ ծաղկեցնելու փայտ կը տանիր , կը յուսամ որ Նուար — Եաշնադարեան վարժարանն որ այնչափ պտուղ արտադրեց , և որոյ մէջ այսօր 50—60 դաստիարակ Հայաստանի մէջ և այլուր վարժարաններն ևլն. կրնեն , և երեք հարիւրի չափ աշակերտք ալ զանազան արտաւար դրից մէջ են , այն , կը յուսամ որ բնկերութիւն մը կը կազմէք և կը բանաք այն լուսաւորութեան տաճարը , արդիւնք շատ բարտանց և ջանից , և որ ժամանակին պարագաներէն փակեցու . կը յուսամ որ ընկերութիւն մը կը կազմէք և կըզր . վարժարանն ալ իւր նպատակին յարմար դիրքին կը վերածէք փութով . կը յուսամ որ Քարակնօղեան աղնիւ եղբարք իրենց գրով և բերանայի ըրած խոստումն , որ էր վաճառականական դպրոց մը հիմնել , այսուհետեւ կը բարեհաճին կատարել , զի ողորմութեամբն Աստուծոյ ահա . անցաւ արտերողմը . կը յուսամ որ մեր ազգային լուսամբա փաստարանը որ պարծանք եղան մեզի , կը փութան արտաախանել իմ երկու երեք նամակներուս , զոր անցեալ տարուէն ի վեր ուղղեցի , և Մուրատեան վարժարանի մէջ մեր ազգին ունեցած իրաւունքը պահանջելու օրինական ճամբան վերջապէս ցուցունել կը բարեհաճին . կը յուսամ նաև որ ազգային լուսաւորութեան այն միւս համբաւեալ վաստարանին այն է Երուսաղիմոյ դպրոցին և վանաց յառաջադիմութեան համար՝ յԱղեքսանդրիա գրած նամակիս պատասխանը կը շնորհուի :

Պէտք է գործեմք և յուսամք ասելով միշտ « Եղիցի ըցս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր և զգործս ձեռաց մերոց ուղիղ արա՛ ի մեզ Տէր և զգործս ձեռաց յաջողեա մեզ » :

Նախագահական ճառին աւարտումն ետեւ , Նորին Սրբազանութեան հրահրանք և ժողովոյ հաճութեամբ տաժամեաց դիւանը կազմուեցաւ , երկուսոցն երեսօթիսաններէն Ղազարոսեան Քըրիստոստուր Էֆէնտի՛ Ստեփանայեան և կրտսերագոյններէն Մէլիքեան Մկրտիչ Էֆէնտի՛ Ստեփանայի բաղկեցով :

Ստեփանայեան Էֆէնտի՛ն անսխալապէս ատեանը բացաւ ժամն 8ին ի ներկայութեան 46 երեսօթիսանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62ի :

Ստեփանայեան Էֆէնտի՛ն անսխալապէս ատեանը բացաւ ժամն 8ին ի ներկայութեան 46 երեսօթիսանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62ի :

Ստեփանայեան Էֆէնտի՛ն անսխալապէս ատեանը բացաւ ժամն 8ին ի ներկայութեան 46 երեսօթիսանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62ի :

Ստեփանայեան Էֆէնտի՛ն անսխալապէս ատեանը բացաւ ժամն 8ին ի ներկայութեան 46 երեսօթիսանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62ի :

Ստեփանայեան Էֆէնտի՛ն անսխալապէս ատեանը բացաւ ժամն 8ին ի ներկայութեան 46 երեսօթիսանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62ի :

Ստեփանայեան Էֆէնտի՛ն անսխալապէս ատեանը բացաւ ժամն 8ին ի ներկայութեան 46 երեսօթիսանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62ի :

Ստեփանայեան Էֆէնտի՛ն անսխալապէս ատեանը բացաւ ժամն 8ին ի ներկայութեան 46 երեսօթիսանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62ի :

Ստեփանայեան Էֆէնտի՛ն անսխալապէս ատեանը բացաւ ժամն 8ին ի ներկայութեան 46 երեսօթիսանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62ի :

Ք

Ստեփանայեան Էֆէնտի՛ն անսխալապէս ատեանը բացաւ ժամն 8ին ի ներկայութեան 46 երեսօթիսանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62ի :

արտաճական զրեք բերաւ յանձնեց դիւանին : Ստեփանայեան Էֆէնտի՛ն յայտնեց որ թէ և հիմա չպիտի վիճարանուի ասոնց վրայ , ասկայն ըստ կանոնի արտադրած գանուելու հարկը միայն յիշեցուցած է :

Պիւսանն ըստ օրակարգին այն ինչ Մայր դիւանին կազմութեան ձեռնարկել կտա՞նք : Մէլիքեան-գուլի Էֆէնտի՛ն խօսք ասաւ :

ՄԵՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Թ. ԷՃ. — Մայր դիւանին կազմութեան ձեռնարկուելէ առաջ Նախագահական ճառին վրայ խօսք կուզեմ :

Նախ՛ ճառին ամեն մասերուն համար զգացած խորին շնորհակալութիւնս կ'յայտնեմ երկրորդ՝ յիշեցնելով թէ 76 տարուան վերջերն այս Ազգային ժողովն Սրբազան Պատրիարք Հօր արտածութիւն տաւ իւր Արեւելեան խնդրոյն ներկայ պարագայից մէջ այն ամեն տնօրինութիւնն ընել , որը կրնան նպատակ արեւելեան միւս ազգերուն տրուելիքն ոչ նուազ առանձնաշնորհումներ ձեռք բերուելու նաև մեր ազգին համար , կը փութամ հարցնել Նորին Սրբազանութեան թէ այդ արտածութիւնն ինչ արդիւնք տնեցած է : Մեր ըստին նայելով՝ Նորին Սրբազանութիւնը պէտք եղած ջանքերն ըրած և բաւական յառաջ գացած է այս խնդրոյն մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Արդէն հարցում մը կայ այդ մասին երեսօթիսանաց ոմանց կողմէ ստորագրեալ , որ սխալ ներկայացուի ժողովին , ձերն ալ անոր հետ կրնայ միանալ : Սակայն առ ժամանակեաց դիւանին պաշտօնը այսօր միայն Մայր դիւանի ընտրութիւնն ըլլալով պէտք է նախապէս Մայր դիւանի ընտրութեան ձեռնարկել , և ետքի թողուլ ձեր այդ առաջարկութիւնը :

ՄԵՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Թ. ԷՃ. — Ես այդ հարցումն տեղեկութիւն չունիմ . իմ փափաքս էր առաջարկել որ Սրբազան Հայրը բարեհաճի որչափ պարագաներն ու խնչեմութիւնը կը ներկն տեղեկութիւն մը տալ ժողովոյ , այս կէտին վրայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Եթէ ժողովը կընդունի

որ Մայր դիւանին ընտրութիւնն առաջ Մէլիքեան-գուլի Էֆէնտի՛ն առաջարկութիւնը ձեռք առնուի , այն ամեն դիւանը կը պարտաւորի նախ ներկայացնել երեսօթիսանաց այն հարցազիրը՝ զոր սրահ մ'առաջ յիշեցուցի :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ ԵՊՍ. — Ես ալ կը ձայնակցիմ Մէլիքեան-գուլի Էֆէնտի՛ն թէ Մայր դիւանի կազմութեանն առաջ երեսօթիսանաց հարցազիրը կարգացուի և Սրբազան Հայրը պարագաներուն ներածին չափ տեղեկութիւն մը տայ ժողովին :

Ստեփանայեան Էֆէնտի՛ն տեսնելով որ հակառակ դիտողութիւն ընող չկայ , Մէլիքեան-գուլի Էֆէնտի՛ն առաջարկը բռնի դրաւ , զոր ժողովն ընդունեց միաձայն . հետեւապէս երեսօթիսանաց հարցազիրը կարգացուեցաւ , որ է .

Հարցում առ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Ժողովոյ . 1876 Դեկտեմբեր 10ին Ազգային ժողովն իւր ԺԶ. նիստին մէջ , վստահ Սրբազան Պատրիարքին ազգասիրութեան և հանճարին , Օրակարգով մը իրեն յանձնեց ամենայն տնօրէնութիւն մեր Ազգին դատին համար թէ՛ Բ. Իրան քով և թէ՛ ուր որ անկ ըլլայ :

Անկէ ի վեր պատերազմը տեղի ունեցաւ , և սոյն միջոցին բնականաբար պիտի լուէր քաղաքագիտութիւնը , այլ այսօր որ պատերազմը վերջացած և Եւրոպական Աւագածողովը (քօնկրէ) Պէրլինի մէջ գումարուած է արեւելեան խընդրոյն լուծմանը , այն է արեւելից քրիստոնեայ ազգաց իրաւունքները պաշտպանելու համար , յորս մեծ տեղ մը կը ընէ մեր Հայոց ազգը , անշուշտ Սրբազան Պատրիարքը զազգը օրինաւորապէս ներկայացընող սոյն Երեսօթիսանական ժողովին իրեն յանձնած նուիրական պաշտօնը դուրս հանելու արիարար ձեռնարկած է :

Արդ ամենայն ակնածութեամբ կը հարցնենք Նորին Բ. Սրբազնութեան թէ՛ կարելի է արդեօք այս մասին հակիրճ անդեկութիւն մը տալ Ազգային Ժողովոյս :

2 Յունիս 1878 ի Կ. Պոլիս

Ազգային Երեսօխոխանք

- |                |                       |
|----------------|-----------------------|
| Ք. Ժ. Իգորյան  | Ա. Բ. Վ. Բարսիկեանց   |
| Յ. Վ. Փափազեան | Եղեղի Չ. Արամեան      |
| Յ. Ք. Միրեան   | Սոփիա Քանանայ         |
| Յ. Ք. Սերոբեան | Տէր Արիստակէս Քանանայ |
| Ս. Արշակ       | Մահակ Ք. Տէր Սարգսեան |
| Յ. Իրիսեան     | Ա. Յ. Այվազեան        |
| Թ. Պէկեան      | Մ. Յ. Մելիքեան        |
| Տ. Փափազեան    | Ք. Վաղարսեան          |
| Թ. Թէրզան      | Բ. Մ. Քիրքճիպաշեան    |
| Մ. Գափառեան    | Ա. Գ. Պէշիրեան        |

ՄՐԱԶԱՆ ՆԱԽԳԱՀ. — Այդ հարցման պատրաստ եմ պատասխանել, եթէ ժողովն իր հաճութիւնը տայ :

Ժողովը բռնով իր հաճութիւնը յայտնեց :

ՄՐԱԶԱՆ ՆԱԽԳԱՀ. — Շնորհակալ եմ այն Երեսօխոխան Էֆէնտիներէն որ այս հարցումն ազդեցին, շնորհակալ եմ նաև այն ձեւին համար որով խորագրեալ է :

Այս պահուն իմ պատասխանատուութիւնս շատ մեծ է, և այդ պատասխանատուութեան զգացումը զիս կը խտնեցնէ ու կը բռնեցնէ միանգամայն : Թող Ազգս ալ այս իմ վիճակս հասկընայ ու ներողամտ ըլլայ ինձի :

Գիտեմ, Երեսօխոխան Էֆէնտիներ, այն զգացումը որուն հա թորգման կը կանգնէք, ընդհանուր ազգին զգացումն է. ոչ ոք ինձի շափ դիպէ զայդ, զի ամեն որ ամեն կողմէ հարսէր ու պարտաւոր կընդունիմ, մանաւանդ մեր երեք միլիոնէն աւելի Հայերէն որ հայրենի հողին վրայ ազգային գոյութիւնը պահեցին մինչև այսօր : Այսպիսի անբարեկամաց, անբարեկամութեանց ու երկիրչի ես պատասխան մը պար-

տաւոր եմ այսօր. այս պատասխանս է ձեզի՛ ու ի ձեզ բոլոր Ազգին, Սրբազն յուսով :

Հայոց ինքզինքը իր արժանաւոր կերպովը ներկայացած է թէ՛ Բ. Գրան և թէ՛ Երասխան անթիւնեանց : Բ. Գրան իր պաշտպանութիւնը խոտուցաւ, Երասխան անթիւնեանք ամենքն ալ իրենց համակրութիւնը յայտնեցին ու ամենէն ալ խօսք ստան իմ որ դեպքումս ժողովն մէջ նկատուողութեան պիտի առնուի մեր Ազգին վիճակն ալ. հասարակաց կարծիքն ալ այսօր Երասխանի մէջ ոչ ևս անտարբեր է մեզի համար :

Այ-Աթէֆուտի գաշնադրութեան մէջ մասնաւոր յօդուած մը կայ արդէն Հայոց վերաբերեալ. ամենքնիդ գիտէք այդ յօդուածը : Առաջին անգամ է որ գաշնադրութեան մը մէջ Հայոց ու Հայաստանի խօսքը կըլլայ : Տարակցս շունիմ որ Երասխան մեծ գաշնադրութեան մէջ որ պիտի կըրտի Պէրլին անցիլ-չատակ շ'պիտի մնայ մեր ազգը :

Այլ ի՞նչ պիտի ըլլայ այն կարգադրութիւն որ պիտի որոշի մեզի համար : Զայս չ'զիտեմ և ոչ թերևս գիտեն տակաւին այն քաղաքագէտք որ զայդ գաշնադրութիւնը պիտի խորհրեն :

Իմ բոլոր ջանքս այն է որ այնպիսի կարգադրութիւն մ'ըլլայ որ ազգին կեանքը դիտուածոց չ'մասնաւորի :

Միս կողմէն ո՛չ որ կրնայ ուրանալ Հայ ազգին իրեն վիճակակից ազգաց համար ըլլալիք կարգադրութեանց մասնակցելու իրաւունքը : Կը փութամ յաւելցնել որ ամենէն առաջ Բ. Գրանը վերցած է ու կը վիսցէ մեր այս իրաւունցիմ :

Վերջապէս, Երեսօխոխան Էֆէնտիներ, ձեռքս խղճիս վրայ դնելով կը յայտարարեմ ազգիս թէ ինչ որ կարելի էր աշխատիլ, խօսիլ գրեւ, ամենքը ըրինք, մեր պայտքն էր մտնալ մեր անձը և տկարութիւնը՝ ու ազգը մտածել. մտացոնք մեր անձը ու ազգը միայն մտածեցինք. ո՛չ թէ միայն ես, զի իմ է բոլոր պատասխանատուութիւնս այլ ոչ բոլոր արդիւնք, զի առաջին օրէն սկսայ գործակցութեամբ իմ Սերբազան Եղբարցս, բոլոր Եպիսկոպոսական դա-

տան որ ի Պոլիս : Այսօր իսկ երկու Եպիսկոպոսանք՝ մեր եկեղեցւոյն ու ազգին երկուքն արթնանքնըր, յետ ի բարքանչիւրն եւրոպական դանտպան տէրութեանց յով պաշտպանելու Ազգին դատը, միացած են ի Պէրլին միտքան աշխատելու համար դեպքումս ժողովն քով :

Աստուած մեր ու անոնց ջանքերը պատկէ : Սրբազնք յուսով :

ԱՅՏՆԱԳԻՆ ԵՑ. — Լսեցիր Սրբազան Հօր պատասխանը, խօսք ունի՞ք այս մասին :

Յ. ՄԱՅՅԷՆՍ ԵՊՍ. — Հարցումն ստորագրող երեսօխոխանաց կողմէ շնորհակալութիւն կը յայտնեմ որ Նորին Սրբազնութիւնն աննկուն արիւթեամբ աշխատած է և կաշխատի ազգին ինքզինքն համար. ինքն է միայն հեղինակ այս աշխատութեանց. թէ և Եպիսկոպոսանքս ալ յիշեց իրրև իրեն աշխատակից, սակայն մեր հրամանատարութեան պարտաւոր եմք. և ինչան մեր շնորհակալութեան պարտաւոր եմք Նորին Սրբազնութեան աջը համբուրել :

Զայս բնեղով Մատթէոս Եզրս Սրբազանին աջը համբուրեց. նոյնպէս բոլոր երեսօխոխանքս որ ելնեղով համարեցին Նորին Սրբազնութեան աջը յուզեալ սրտիս :

ՄԵՐԵԼԵՄ-ԳՈՒՂԻ Յ. ԵՑ. — Մատթէոս եւ պիսկոպոսի խօսքը հաստատելէ ետեւ, նախ Ս. Պատրիարք Հօր բրած ջանից համար շնորհակալութեան քուէ կառաջարկեմ. երկուքդ կառաջարկեմ որ Ազգ. ժողովն սակեց առաջ Սրբազանին ստան յարտանութիւնը վերահաստատել, որպէս զի Նորին Սրբազնութիւնն անթերի կերպով շարունակէ իւր ջանքերն ինչպէս մինչև ցարդ : Երբորդ նկատեղով Սրբազան Նախագահ Հօր պահած չափաւորութիւնն իւր պատասխանին մէջ, նկատեղով Նորին Սրբազնութեան ստան յայտնին ու խրատած համբուրութիւնը, նկատեղով ընդհանուր արեւելից ներկայ վիճակն, որոց բողոքն այս պահուն Պէրլինի մէջ դաժմարեալ արքայաժողովն կախաւն ունի, նկատեղով որ մեր ազգն ալ արեւելից մէկ մեծ

մասը կը կողմէ և նկատեղով որ արդի անտառ գութեան վիճակին մէջ ժողովս չէ կարող կատարեալ գիտակցութեամբ գործելու, կառաջարկեմ ներկայ ըրջանի նկատելը յետաձգել մինչև այն ստան՝ երբ Ս. Նախագահը հարկ տեսնէ նորէն դաժմարելու : Այլ ժողովն ուզէ վերջին առաջարկութեանս պատճառն ալ կը բացատրեմ :

ՄԱՀՊԱՋ Ն ԵՑ. — Մէրեւմ-գուլի Էֆէնտի այս առաջարկութիւնը կը կրկնեմ :

Այս պահուն Քախաւանեան Էֆ. ի ստորագրութեամբ յետագայ առաջարկութիւնը մասնաւորութեամբ կարգադրեցաւ գիտնին կողմէ :

Սրբ. ժողովս իւր Ս. Նախագահին՝ Տ. Ներսէս Ս. Պատրիարքին Կ. Պոլսոց Ազգին բարոյն և սարգոյնն նկատմամբ տարած սնծնալիք ջանիցն ու աշխատութեանցը համար շնորհակալութիւն կը յայտնէ և Պաշտպան հայրենեաց արտաղը կընծայէ :

Մ. ԳԱՓԱՄԱՅԵԱՆ

Ս. Նախագահն սնծարեց բողոքեղով հանդերձ մերժել արտաղի առաջարկութիւնը :

ՊԵՒԵԱՆ Յ. ԵՑ. — Շնորհակալութեան քուէի առաջարկութիւնն աւելորդ կը գտնեմ. որովհետեւ պահ մ'առաջ հանդիսաւոր շնորհակալութիւն մատուցինք՝ ամեն մէկերնիս Նորին Սրբազնութեան աջը համբուրելով :

ԱՅՏՆԱԳԻՆ ԵՑ. — Այս, գործնապէս ընդհանրակալութիւննիս մատուցինք. հիմա տեսակաւ նապէս ալ շնորհակալութեան քուէ կառաջարկուի ըստ օրինի :

Յ. ՄԱՅՅԷՆՍ ԵՊՍ. — Ժողովն ներկայ ըրջանի նկատելու յետաձգելու առաջարկութիւն մը կընէ Մէրեւմ-գուլի Էֆէնտի, յաւելցնելով թէ պատճառները պիտի բացատրէ եթէ ժողովն ուզէ լսել. թերևս ժողովը համարուի այն պատճառներուն վրայ, զորս պիտի յայտնէ Մէրեւմ-գուլի Էֆէնտին : Բայց կը յիշեցնեմ թէ նախ

Մայր դիւանին ընտրութիւնն ամենակարեւոր է, անկէ ետքը կազմն այս անասկ առաջարկութիւնները:

Ա.Ա.ՅԱՅԵԱՆ Է. ԷՖ. — Կը ձայնակցիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շնորհակալութեան քուէ կառաջարկութիւն հանդերձ արտաքին մը. թէ ե զործնակամապէս ընդհանար շնորհակալութիւն մատուցուեցաւ, բայց անտարածապէս քուէի մ'ալ հարկը կը տեսնուի. ուստի կը հրատարակուի երեսօրագրանները յատկապէս շնորհակալութեան քուէ տալ Սրբազանին. բայց արտաքին մասին չենք կրնար պնդել թաւ մը գտնուի, որ մեր ներքին զգացումը կարենայ բացատրել. ուստի մեր կարողութեան վեր կը համարիմ Ա.մեն. Ս. Պատրիարք Հօր մեծազարմութեանցն արժանի անուն մը տալ:

Ժողովը միահամուռ ոտք ելնելով շնորհակալութեան քուէ տուաւ յանուն Ս. Նախագահին:

ՄԵՐԵԼԵՄ-ԳՈՒԼԻ Ե. ԷՖ. — Իմ առաջարկութիւններս երեք էին, որք յարակցութիւն ունին իրարու հետ. առաջինն է շնորհակալութեան քուէ յանուն Սրբազանին, ասի կատարուեցաւ. կը մնան միւս երկու առաջարկութիւններս, որոց մին է արդէն արտաքին արտաքին վերահաստատութիւնը, որպէս զի Նորին Սրբազանութիւնը Ժողովն այժմ առած զարծի. սակայն այժմն արագաւ մը յատկացնելու մտքին համակարծիք չեմ, որովհետեւ Ն. Սրբազանութիւնը յուսով արտաքին ըստ. ես թերեւ անկէ առաջ պիտի երթամ և փրկիչ արագաւ պիտի տամ երբ յոյսերն արդիւնատրին: Իսկ միւս և վերջին առաջարկութիւնս է ներկայ ընդհանի նիստերը յետաձգել:

Իմ առաջարկութեան մէկ մասն առաջ և մէկ մասն ետքն քուէարկելու արտաքին մը չեմ տեսներ. շնորհակալութեան քուէն արտաքին. սկստ է որ մնացեալ երկու առաջարկութիւններս ալ քուէի դրան անմիջապէս:

ՊԵՏԱՆ Թ. ԷՖ. — Սրբազանին արտաքին

արտաքին վերահաստատութեան մասին Մէրեւէմ-Պալի Էֆէնտի սառաջարկութիւնը կրնար անմիջապէս քուէարկել. սակայն չենք կրնար Ժողովը նաեւ յետաձգման մասին ըրած առաջարկութիւնը Մայր դիւանին կողմէն թէնէն առաջ քուէարկել. սկստ է որ Ժողովը իր դիւանն անենայ. սառայ դիւանի ժողովը պայտիւն չունենալ կը նշանակէ. եթէ Սրբազանն որ մը յանդարձ Ազգային ժողովը զուժարկէ ստիպուի, ինչ պիտի ընէ, սառայ դիւանի որո՞ւ հետ պիտի խորհրդակցի Ժողովը զուժարկելու համար:

ՄԵՐԵԼԵՄ-ԳՈՒԼԻ Ե. ԷՖ. — Կը կրկնեմ թէ իմ առաջարկութիւններս մեկնկիւս հետ կառուած են. և խօսք կը խնդրեմ բացատրութիւններս տալու համար:

ՊԵՏԱՆ Թ. ԷՖ. — Մէրեւէմ-Պալի Էֆէնտի սառաջարկութիւններն երեք են. մէկն ընդհանուրացաւ, երեսօրագրան ոտքի վրայ ելլալով և Սրբազանին աջն համարելով շնորհակալութիւն յայտնելէ ետեւ, քուէով ալ կրկնեցինք. կը մնան արիւշ երկու առաջարկութիւնը, որոց մէկն է Սրբազանին արտաքին արտաքին վերահաստատութիւնը, սակայն Մայր դիւանին ընտրութեանն առաջ ալ ետքն ալ քուէարկութիւն հող չէ. իսկ միւսին գաղով՝ այն է Ժողովը նիստերուն յետաձգումն, այս կէտը վիճարանութեան կարտ է և Մայր դիւանի ընտրութեանն առաջ անցունելն անտեղի կը տեսնեմ. սկստ է նախ Մայր դիւանի ընտրութիւնը կատարել, զի Ժողովն սառամանակեայ դիւանով չկրնար մնալ: Կը ցուիմ որ Մէրեւէմ-Պալի Էֆէնտի պէ՞ համարեղ մէկն այս կէտը չուզիք հասկնալ:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Երկու ընդդիմարանից մէջ եղած խօսրերը թիւրքիմացութեան յառաջ կազմն. խնդիրը ստոր է. Մէրեւէմ-Պալի Էֆէնտի սառաջարկութեան մէկն է Սրբազանին արտաքին արտաքին վերահաստատել. մէկը չից' որ այս առաջարկը չընդունի. ուստի կըրնանք դիւանին ընտրութեանն առաջ քուէարկել այս կէտը: Իսկ միւսին գաղով, ըստ որում վիճարանելի կէտ մ'է, համարեղ եմ Պէլեան Էֆէնտի, սառայ Մայր դիւանին անեն. նալու կարելի չէ այս կէտը վիճարանութեան ղնել. միւս կողմէ Մայր դիւանին ընտրութիւնը կարեւոր է Ժողովին պայտիւնը պահպանելու համար:

Վարանելի կէտ մ'է, համարեղ եմ Պէլեան Էֆէնտի, սառայ Մայր դիւանին անեն. նալու կարելի չէ այս կէտը վիճարանութեան ղնել. միւս կողմէ Մայր դիւանին ընտրութիւնը կարեւոր է Ժողովին պայտիւնը պահպանելու համար:

ՄԵՐԵԼԵՄ-ԳՈՒԼԻ Ե. ԷՖ. — Յետաձգման առաջարկութեան վրայ սխալ մեկնութիւններ կը տրուին, ուստի խօսք կուզեմ զանմար ուղղելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախ ժողովին պիտի հարցնեմ թէ կուզե՞ շարունակել յետաձգման վիճարանութիւնը:

Չայս բերով Ատենագետ Էֆէնտի քուէի դրաւ, և Ժողովն ամենամեծ մասով որոշեց փակել այդ վիճարանութիւնը:

Հետեւապէս Ատենագետ Էֆէնտի հրատարակեց Մէրեւէմ-Պալի Էֆէնտի՝ որ յետաձգման խնդիրն ետքի թողով միայն արտաքին վերահաստատութեան խնդրոյն մասին ըրած առաջարկութիւնը զրով ներկայացնէ քուէի դրուելու համար:

Մէրեւէմ-Պալի Էֆէնտի անմիջապէս զրի առաւ և ներկայեց հետեւեալը.

«Մեր ազգին իրաւանց պաշտպանութեան նկատմամբ՝ Ազգ. Ժողովոյս 1876 Գեղա. 10ի նախին մէջ իւր Ս. Նախագահ Ամեն. Տ. Ներսէս Պատրիարքին տուած արտաքին վերահաստատութիւնը Ժողովս այսօր կը վերահաստատէ, որպէս զի Նորին Սրբազանութիւնն իւր ջանքն անխափան յառաջ մղէ ամեն ուր որ հարկ լինի:»

ՄԵՐԵԼԵՄ-ԳՈՒԼԻ

Այս առաջարկութիւնը քուէի դրուելով, Ժողովն ընդունեց զայն միաձայնութեամբ, և որոշեց անմիջապէս Օրակարգին անցնել:

Պ.

Յետաքննութեան Մայր դիւանին

Նախ՝ Ա. Ատենագետի ընտրութեան համար երեսօրագրան հրատարակեցան զիւանին կողմէ ըստ օրինի միանուն քուէ պատրաստել:

Անմիջապէս քուէարկութիւնն սխալ, և քուէհամարի համար քննիչ կարգուեցան վիճակաւ:

Պէտրդ	Քահանայ	Արծրունի
Յարութիւն	•	Սերոբեան
Յովակիմ Էֆէնտի	•	Ֆէլեքեան
Սիմոն	•	Սերոբեան

Քուէհամարը կատարուելով հետեւալ արդիւնքն ունեցաւ.

Թիւ քուէարկուց	60
Ստեփան փաշա Աղանեան քուէ	38
Նորեան Էֆէնտի	10
Ս. Ազարէկեան	7
Յ. Մէրեւէմ-Պալի	3
Յ. Վաղուկեան	1
Յ. Արշակ	1

Հետեւապէս Ատենագետ Էֆէնտին հաշուեց թէ Ստեփան փաշա Աղանեան 38 քուէով այսինքն բացարձակ առաւելութեամբ Ա. Ատենագետ ընտրուած է:

Բ. և Գ. Ատենագետաց ընտրութեան համար երեսօրագրան վերադրու հրատարակեցան զիւանին կողմէ ըստ օրինի երկանուն քուէ պատրաստել:

Այս միջոցին թէ և երեսօրագրաններն ու մանր ժամանակը խնայելու մտք՝ 2 Ատենագետաց հետ 3 առնագայրաց քուէարկութիւնն ալ զստ քուէթղթով մը միանգամայն կատարել առաջարկեցին, սակայն չիտիպիւն ծագելու կասկածանօր չընդունուեցաւ այս առաջարկութիւնը, որպէս զի մի զուցէ առնագետ չընտրուողներն Ատենագետի համար քուէ տանել զրկուին, ուստի և նախ 2 առնագետաց քուէարկութիւնն ու քուէհամարը կատարուելով արդիւնքն եղաւ հետեւեալը:

Թիւ բուհարկուաց	60
պարտաք բուհ	1
Եւսուֆեան Տիգրան Էֆէնտի բուհ	50
Նուրեան	39
Մէրէճ-գուլի Թարութիւն	19
Ղաղարուսեան Վրիտաստուր	11
Խիթիճեան Կարապետ	9
Շահազ Կարապետ	4
Մարկոսեան Գրիգոր	1
Քաղաղեան Յակոբ	1
Փէշտիմալճեան տոբթօր	1

Հետեւապէս Եւսուֆեան Տիգրան Էֆէնտի 80 բուհով Բ. Ստեփանայեան և Նուրեան Էֆ. 39 բուհով Գ. Ստեփանայեան հոշակուեցան Ատենայեան Էֆէնտի կողմէն :

Նուրեան Էֆէնտի անմիջապէս խօսք անեն ընտրութեանը համար և միանգամայն յայտարարեց թէ իւր զբաղմանց պատճառաւ կը ցաւի որ չկրնար այս պաշտօնն ընդունիլ և խընդրեց որ ժողովը չեթի իրեն և ընդունի իւր հրաժարականը :

Նախագահ Սրբազանն ու Ստեփանայեան Էֆէնտին թէ և պատասխանեցին որ ժողովն իր հրաժարականը չընդունիր, սակայն Նուրեան Էֆէնտի պնդելով իւր հրաժարականին վրայ առաջարկեց որ արձանագրուի :

3 Ատենադպրաց ընտրութեան համար երեսուխամբ վերատին հրաւիրուեցան զիւանին կողմէ ըստ օրինի եռանաս բուհ պատրաստել, Քուէարկութիւնն ու բուհհամարը կատարուելով, արդիւնքն եղաւ հետեւեալը :

Թիւ բուհարկուաց	60
Հ. Ս. Ալաճաճեան Էֆ. բուհ	38
Մ. Մելիքեան	35
Ս. Տէրոյէնց	24
Մ. Քախումաճեան	22
Գ. Գրասէրեան	20
Թ. Պէկեան	16
Գ. Մելիքեան	12
Յ. Մէրէճ-Գուլի	7

Կ. Խիթիճեան Էֆ. բուհ	2
Յ. Ալաճաճեան	1
Մ. Փախումաճեան	1
Ն. Գրասէրեան	1
Ս. Փախումաճեան	1

Հետեւապէս ըստ կարգի բուհից ընտրուեցան՝

Ալաճաճեան Հ. Ս. Էֆ. Ս. Ստեփանայեան
Մելիքեան Մ. » Բ. »
Տէրոյէնց Ա. » Գ. »

Այսպէս Մայր դիւանին ընտրութիւնն աւարտելէ ետեւ, Ատենայեան Էֆէնտին բուհհամարին ամբողջ արդիւնքը ժողովին հաղորդելով, Մայր դիւանին անդամ ՀՈՁԱԿԵՑ

Ալաճաճեան Ստեփան փաշա Ա. Ստեփանայեան	
Եւսուֆեան Տիգրան Էֆ. Բ. »	
Նուրեան	» Գ. »
Ալաճաճեան Հ. Ս. » Ա. Ստեփանայեան	
Մելիքեան Մկրտիչ	» Բ. »
Տէրոյէնց Ա. տով	» Գ. »

Առժամեայ ատենայեան Էֆէնտին յայտարարելով որ ըստ որում առժամեայ դիւանին պաշտօնը միայն Մայր դիւանը կազմել էր և իր այս պաշտօնը կատարած է, խնդրեց Ս. Նախագահէն հրաւիրել նորընտիր ատենայեան իւր պաշտօնին, և ինք անմիջապէս թաղուց դիւանը :

Եւ որովհետեւ նորընտիր ատենայեաներէն միայն Նուրեան Էֆէնտի ներկայ կը գտնուէր, Սրբազան Նախագահ Հօր հրաւիրանաց և թախանձանայ վրայ Նուրեան Էֆէնտի փութաց միայն այս անգամու համար իր պաշտօնը վարել և դիւանին մէջ իր տեղն անցնելով, նայնպէս Ալաճաճեան Համբարձում և Մելիքեան Մկրտիչ Էֆէնտի ատենադպիր բողոքելով, առժամանակեայ դիւանը զաղրեցաւ իր պաշտօնէն :

**Սրբազան Նախագահին Ս. Նախագահին**

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱԷ. — Կը խնդրեմ զիւանէն որ ամենէն առաջ իմ ճառիս մէջ ըրած մէկ առաջարկութեանս վրայ ժողովին աշտարակին անկողնէն չնայր ընել, այսինքն՝ Մելիքեան խորհն եպիսկոպոսն որ բանի մ'անել ի վեր խորհրդականի տխարաւով Պատրիարքարանի մէջ իմ զերս կը կատարէ խիստ արժանաւոր կերպով, կատարելով որ ժողովը հաստատէ զայն իբրև խորհրդական կամ իբրև սեղապահ, ինչպէս որ կուզէ, զի ևս ասիպուած եմ առժամանակ մը մեկնիլ Պօլսէն օգոստոսի 1-եան համար, թէ և դարձեալ աշխատելէ ետ չախտի կենամ :

Յ. ՄԱՏՔԷՆՍ ԵՊՍ. — Ժողովը պարտաւոր է Սրբազան Պատրիարք Հօր բացման ճառին ուղերձով մը պատասխանել, այս պէտքն անցեալ տարի ու զղացուեցաւ այս ժողովին մէջ և եթէ չեմ սխալի՝ մասնաժողով մ'ալ կազմուեցաւ, սակայն այս մասնաժողովը դժբաղդութեամբ չը կրցաւ իր պաշտօնը կատարել, այս անգամ ալ միևնոյն պէտքը կը տեսնուի, ուստի կատարելով որ անցեալ տարուան պէս մասնաժողով մը կազմուի ուղերձ մը խորհրդարան և բերելու պաշտօնով, յորում Սրբազանին առաջարկութեանց ալ պատասխանը տրուի :

ՔԱՆԻ ՄԸ ԶԱՅԵՐ. — Կը կրկնենք այս առաջարկութիւնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՅ. — Ժողովին անմիջական գործն է ըստ օրինի նախարանից զիւանայ կողմութեամբն զբաղիլ, առ այժմ չենք կրնար ուրիշ գործի ձեռնարկել :

Գաղով տեղապահի խնդրոյն, այս ժողովը չմիջամտել, խառն ժողովին կը պատկանի այդ գործը, զոր ըստ պատշաճին կը անօրինէ և եթէ հարկ դասուի ժողովիս միայն ի զիտութիւն կը հաղորդէ :

Կը մնայ պակաս մը, զոր պէտք է իրայնել, օրացրութեանց մէջ կարգացինք որ Ս. Պատրիարքը Պէրլինի Առաջաժողովին երթալու խընդ-

րանօր թաղրիր մը մատուցել է Բ. Գրան. կատարելով որ այդ թաղրիրը կարգացուի հասեարձանագրուի :

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՅ. — Նախ՝ Մատթէոս և պիսկոպոսի առաջարկութեանն է կարգը. Սրբազանին ճառը ընկեր, իր անձնականի մասին առաջարկութիւն մ'ունի. Մատթէոս եպիսկոպոս առաջարկեց յանձնարուի մը կողմէն ուղերձ մը պատրաստելու համար ի պատասխան Սրբազան Հօր ճառին, հարկաւ այդ ուղերձով պիտի ստատարան տրուի նաև Նորին Սրբազանութեան ճառին այն կէտերուն, որ որոշման կարօտ են :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱԷ. — Իմ առաջարկութիւնս Պարչահան անհրաժեշտ պիտայրի մը կը վերաբերի, որուն բացատարար պատասխան տալ հարկ է, իմ ճառիս պատասխանն ուրիշ է, թերևս ժողովն եկող շարժու չգտնարուի, անոր համար իմ տեղապահս այժմէն հաստատուել օգտք է, սպասել ոչ՝ նա չլարուակէր երբ ժողովը չվաւերացնէ անոր պաշտօնը :

ՊԵՆԱՆ Թ. ԷՅ. — Նորին Սրբազանութիւնն իրաւունք ունի իր խնդրոյն առաջնութիւն տրուելու պահանջելու, փասն զի եթէ իր ճառին ուղերձով պատասխանուելուն սպասէ, ո՞րքան գուցէ երկարի ամիսներով, այն ատեն խորհրդականի պաշտօնէութեան խնդիրն առ կախ կը մնայ, եթէ այս խնդրոյն առաջնութիւն պիտի տրուի, պատրաստ եմ կարծիքս յայտնելու :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱԷ. — Կը խնդրեմ որ առաջնութիւն տայք :

(Հաւանութեան ձայներ)

ՊԵՆԱՆ Թ. ԷՅ. — Ս. Պատրիարքն արդէն խորհրդական մ'ընտրած է և խառն ժողովն անոր ընտրութիւնը վաւերացուցած, Այս գործադրութիւնն իրաւամբ խառն ժողովին կը պատկանի, ինչպէս ըսաւ Քրիստոստոս Էֆէնտին, և խառն ժողովն ալ արդէն իրեն պատկանեալ իրաւունքն ի գործ դրած է, Ս. Պատրիարքն այժմ կողաց խնդրելու որ իր ընտրած խորհրդ-

դատարանն այս ժողովն իր տեղադրած հաստատու-  
 արի. նախ՝ տեղադրած անուն չենք կրնար բն-  
 դանիլ, քանի որ Պատրիարք մը կայ. երբ  
 պատրիարքական ակտը թափուր ըլլայ, այն  
 ատեն տեղադրած կը հաստատուի. օրէնքով այս-  
 պէս զիտենք: Արդէն խորհրդականի տնտեսով  
 անձ մը ընտրուեալ է. այս անունը կը բաւէ. և  
 թէ վաւերացման համար է որ Ս. Պատրիարքը  
 հաս կը դիմէ, չենք կրնար. վասն զի սահմա-  
 նադրութեան մէջ այդ անուն պաշտօնեայ չկայ.  
 խորհրդականութիւնը տեսակ մը օգնականու-  
 թիւն է, որ պատրիարքական պաշտօնին տէր-  
 ջը կը պատկանի, անոր կողմէն ընտրեալ և ա-  
 նոր միայն պատասխանատու ըլլալով, հեռեա-  
 րաբ ժողովն պէտք չէ միջամտէ: Արդէն ընտ-  
 րեալն խորհն Սրբազան, բարի յատկութիւննե-  
 րովն արժանի է անոր՝ երեւոյթանութեան  
 համակրութիւնը փոքրեւելու. այս ժողովոյս մէջ  
 ոչ որ է որ հակառակի անոր ընտրութեանը.  
 բայց նա չուզէր եզեր տաանց Ընդհ. ժողովոյ ո-  
 րոշման իր պաշտօնը կատարել: Ս. Պատրիար-  
 քին կը մնայ սուրահայնել զանի որ ժողովն հա-  
 կատակ չէ անոր պաշտօնավարութեան:

**ՔՈԼՈԼԵԱՆ Ա. ԷՖ.** — (Քանկապետ Փայ-  
 ժորայ) Սոսոյք է որ խորհն Սրբազան իր խոր-  
 հրդական ընտրուած օրը խառն ժողովն մէջ  
 պէտք յայտնեց իր հաստատութիւնն Ազգային  
 ժողովն ընդունելու. մեք ըսինք թէ այս մա-  
 սին Սահմանադրութեան մէջ չկայ այնպիսի կէտ  
 մը՝ որ ստորաւորէ զմեզ խնդիրն Ազգային ժո-  
 ղովն քուէն անցունելու. հերիք է որ խառն ժո-  
 ղովը կընդունի ձեր ընտրութիւնը, և եթէ Ազ-  
 գային ժողովոյ ատենը ալ՝ մինչայն պատաս-  
 խանը պիտի ընդունին:

Կերեի թէ խորհն Սրբազան կատկածի մէջ  
 է թէ մի գուցէ երեւոյթանութիւնը զխառն-  
 թիւն մ'ընէ. այս է պատճառը և ոչ ուրիշ բան՝  
 այս խնդիրն այսօր հա գալուն. եթէ ժողովը  
 զխառնութիւն մը չունի խորհն Սրբազանի պաշ-  
 տօնավարութեանը դէմ, պէտք է ասի զխոյնել  
 և բոկ իրեն որ այսքանով բաւականանայ:

**ՄԷՐԵԼԻՄ ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.** — Սրբազան հօր

առաջարկութեան մասին ինձմէ ատով խառն  
 ատենադարանից համակարծիք եմ, ևս ենթադրած  
 էի թէ ասի անձնավարութեան խնդիր մը դար-  
 ձած ըլլայ խորհն եպիսկոպոսի համար. և եթէ  
 Ընդհ. ժողովը հաստատէ՝ այն ատեն կընդունիմ  
 խորհրդականի պաշտօնը քուէն այնպէս կը հե-  
 տելի. բայց տեսնենք ինչու համար Սրբազան  
 Պատրիարքը խորհրդական դրած է. որովհետեւ  
 վերջին անգամ հրաժարական տուան ժողովն  
 արտօնութիւն տուաւ խորին Սրբազանութեան  
 օգնական մը դնել իւր կողմէ որչափ ատեն որ  
 ուզէ. քուէ է թէ խորհն եպիսկոպոսի պաշտօնն  
 անուղղակի կերպով այս ժողովն արտօնեալ է.  
 ահա այսքանը բաւական է. իսկ ուղղակի վաւե-  
 րացում Սահմանադրութեանն անդին անցնել է,  
 այդ չկրնար ըլլալ:

**ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱԷ.** — Դատարար բայց  
 եթէ պէտք ըլլայ ինձ տեղ մը երթալ և չկր-  
 նամ Ընդհ. ժողովը գումարել, ինչ ընեմ:

**ՔԱԶԱՋԱՆ Յ. ԷՖ.** — Կըստի թէ Սահ-  
 մանադրութեան մէջ չկայ, իրրե թէ վարչա-  
 թիւնէն զուրս բան մ'եղած ըլլար խորհն Սր-  
 բազանի պաշտօնն՝ որ է վարչական ժողովոյ  
 նախադատութիւնն ի բացակայութեան Ս. Պատ-  
 րիարքին: Ես չեմ կրնար ըմբռնել թէ ինչպէս  
 Սահմանադրութեանն զուրս կը համարին այն  
 պաշտօնն՝ որ բուն իսկ սահմանադրական ժող-  
 վոյ նախադատութիւնն ու անոնց գործադիր իշ-  
 խանութիւնը կը վարէ. թէ և Սահմանադրու-  
 թեան մէջ գրուած չէ թէ երբ Պատրիարքը հի-  
 ւանդութեան կամ որ և է պատճառաւ իր պաշ-  
 տօնն բացակայ մնայ, խորհրդական մը կը դնէ  
 սակայն քանի որ այսօր խորհրդական մը գրուած  
 է, և սահմանադրական պաշտօն կը վարէ, ին-  
 չը՞ չկրնանք վաւերացնել. հակառակին մ'է  
 այս, թեթև շանցնինք: Թերևս խորհն Սրբա-  
 զանի պահանջումն իրաւացի ըլլայ, երբ չենք  
 ուզեր անոր պաշտօնը ճանչնալ կամ վաւերաց-  
 նել, ժամկոչի մը տեղ չենք դնել քուէ է: Ես  
 կը խնդրեմ Ս. Պատրիարքին որ տեղադրահա-  
 թեան խնդիր չընէ, և իր խորհրդական վաւե-  
 րացնել կատարեմ:

**ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ.** — Ազգային ժողովն պար-  
 տաւորութիւն չունի ամեն ազգային պաշտօնի  
 վրայ զանուարներն ինք հաստատելու. օրինակի  
 համար՝ պատրիարքական փոխանորդ մը կայ,  
 Պատրիարքն կընտրուի և խառն ժողովն կը  
 հաստատուի. ուստի հարկ չկայ անպատճառ  
 խորհրդականն այս ժողովն վաւերացնել. եթէ  
 հարկ կայ՝ թող քուէն և բանաւոր պատճառները  
 ցոյց տան, որպէս զի օրինաց կարգ անցնի:

Եթէ զիւրազգածութեան խնդիր կայ, շատ  
 դիւրին է շիջարարել և խնդրել որ շարունակէ.  
 Սահմանադրութիւնը չընդունիր և իրաւունք ու-  
 նի. համարինք թէ վաւերացուցինք, այն ատեն  
 ինչպէս պիտի բաժնենք պատասխանատուու-  
 թիւնը. այս ժողովն առջև Պատրիարքն է պա-  
 տասխանատու և մեր յարարութիւնն անոր  
 հետ է. եթէ բանաւոր պատճառ մը կայ, այն  
 ալ Ս. Պատրիարք Հօր օգտախոսութեան համար  
 ու վերջնական ընելու խնդիրն է. այս պարա-  
 գային մէջ ինչ պիտի ընէ Ս. Պատրիարքն. ու-  
 թիշ բան պէտք չէ ընէ. բայց եթէ իր պաշտ-  
 յը կատարեալապէս յանձնէ իւր խորհրդականին,  
 նա կրնայ այն ատեն թէ Ընդհ. ժողովը գու-  
 մարել և թէ պէտք եղած թաղրիրները Բ. Պե-  
 րան գրել:

**ՔԱԶԱՋԱՆ Յ. ԷՖ.** — Եթէ այս խոսքերն  
 ընդունինք՝ կը լինայ. պէտք է բացարձակապէս  
 բռնեք թէ խորհրդականն ի բացակայութեան Ս.  
 Պատրիարքին Ընդհ. ժողովը պիտի գումարէ և  
 ամեն պաշտօն պիտի վարէ:

**ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ.** — Ս, յի՛. փոխանորդն ալ  
 երբեմն Ընդհ. ժողովը կը գումարէ, ո՞վ Ը-  
 սած ունի թէ ինչը՞ կը գումարէ, քանի որ  
 Սրբազան Պատրիարքն արտօնութիւն տաւ  
 կրնէ: Մեր չենք կրնար վաւերացնել ըսի նէ՛  
 Ս. Պատրիարքը չհաշիւանդելու համար է. զի  
 կրնայ ըլլալ որ վաղը խորհն եպիսկոպոսն տեղ  
 մը պաշտօնի կը դրկէ և ուրիշ մը խորհրդական  
 կը դնէ:

**ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱԷ.** — Պոնէ ձեր Պատ-  
 րիարքին ընտրած անձին վրայ վաւերացութիւն ու-  
 նենաւորից յայտարարեցէք և հաստատեցէք թէ

նա պիտի կրնայ իմ ազնորութեանս միջոցին Բ-  
 Պրան թաղրիր գրել կրնել, Ընդհ. ժողով հը-  
 րախրել և իմ տեղս պատասխանատու դանուիլ  
 ձեր առջև. եթէ այսպէս կանխու հաճութիւն  
 չիլը տաւած ըլլաք, ևս ալ գոհ կըլլամ:

**ՔԱՅՆԵՐ.** — Ս, յի՛, վաւերացութիւն անկոր:  
**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Սրբազան, եթէ  
 հրաժարականի ձեռն տակ կընէր այդ խօսքերը՝  
 զիտեցէք՝ որ Ազգը ձեր հրաժարականն երբեք  
 չընդունիր:

**Տ. ՄԱՏԹԻՈՍ ԵՊՍ.** — Սահմանադրութիւնը  
 խորհրդաները խորհրդական անունով պաշտօն-  
 եայ մը չեն դրած մեր օրինադրքին մէջ, և շատ  
 խնամատիւեամբ վարուած են. որովհետեւ երբ  
 Ազգային ժողովը Պատրիարք մը կընտրէ՝ քուէ  
 է մէկ պատասխանատու մը կը ճանչնայ. ուստի  
 եթէ այսօր խորհրդական մ'ալ վաւերացնէ, մէկ  
 կողմէ Պատրիարք և միւս կողմէ ուրիշ եպիսկո-  
 պոս մը պատասխանատու կըլլան, որ օրինաց  
 հակառակ է. իրաւ է որ Ս. Պատրիարքի բա-  
 ցակցութեան խորհրդականը կը գումարէ ժո-  
 ղովներն և անոնց կը նախադատէ, ինչպէս ըսաւ  
 Քաղաքեան Էթիկոսին, բայց ինք Պատրիարքին  
 պատասխանատու է և Պատրիարքն ալ ազգին.  
 իսկ Բ. Պրան գրուած թաղրիրները Պատրիար-  
 քին կրնալը կերթան և ոչ խորհն եպիսկոպոսի  
 կերպով. զի Բ. Պրան ալ Պատրիարքն կը ճան-  
 չէ պատասխանատու և ոչ զայլ որ: Ուստի և  
 թէ խորհրդականը մեք վաւերացնելու ըլլանք,  
 պատասխանատուութեան շիջման իրեն կը ծագի.  
 և եթէ իր տեղադրած վաւերացնելք՝ Սրբազան  
 Պատրիարքին հրաժարականին այժ տուած կըլ-  
 րանք. զայդ չենք ընդունիր: Ուրիշ բան է որ  
 խորհն եպիսկոպոս ոչ միայն ժողովոյս, այլ և  
 ազգին համակրութեան արժանի է:

**ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱԷ.** — Ս, յի՛ ալ տեսնել  
 մը բաժնութիւն է ինձի դէմ. կըսէք թէ անպատ-  
 ճաւ ևս եմ պատասխանատուն. եթէ ևս եմ,  
 կէս ժամ անգամ պէտք չէ հեռանամ պատաս-  
 խանատու եղած տեղէս, մինչդեռ ևս լը ձեմ  
 թէ հեռանդ եմ և օգտախոսութեան համար գուրս  
 պիտի երթամ. զիտեցէք՝ ճար մը ըրէք ինձի:

կամ հրամարտական ընդունեցէր և կամ տեղապահ մը դրէր :

**ՏԱՅՅԵՆՈՍ ԵՊՍ.** — Թէ Չեր Սրբազանութեան և թէ Չեր խորհրդականին վրայ վստահութիւնն կը յայտարարենք . այսքանը կարծեմ բաւական է . ասիկէ աւելին չենք կրնար բնել , մինչև իսկ եթէ Պատրիարք շունենա՞ք և տեղապահ դնել հարկ ըլլայ , Վարչութեան խորհրդին ժողովը կրնարէ գոյն և կը ճանչցնէ Բարան և ազգին . բանի որ խառն ժողովն ունի օրինօք այս իշխանութիւնը՝ մեր վաւերացնելու տեղի չունի :

**ԵՒԹԻՅՅԱՆ Կ. ԷՑ.** — Մեր սահմանդրութիւնն արդէն Վարչութեան կրօն . և Քաղ. ժողովոյ արտօնութիւն առած է՝ իրենց վերաբերեալ ամեն գործողութիւնները ստորինելու բաւ է թէ այն ժողովներն իրենց ձեռնհասութեան մէջ ինչ որ տնօրինեն , արդէն սահմանադրական վաւերացեալ կը համարուի . մանաւանդ որ այս ժողովները համարատուութիւն աւանդին , զոր կը բերեն Ազգային ժողովոյս և իրենց գործողութիւնները հանդիսապէս վաւերել կուտան . և ըստ որում արդէն Քաղ. ժողովոյ շրջանը լրացած է , բնականօրէն պատրիարքական խորհրդականութեան խնդիրն ընդհ. ժողովին վաւերանալու կէտին մէջ է . երբ հասարակական տեղեկագիրը դոյս հաս խնդիրն ինքնին կը լրանայ , ուստի վիճարանութեան ալ հարկ չիլոյ : Ասիկց դուրս արիչ եզրանալու վաւերացում արամազրած չէ սահմանադրութիւնը . ստիկա անազրակի վաւերացում է և ոչ ուղղակի վաւերացում : Միւս կողմէ սրովեաւ Ազգային ժողովը կատարեալ վստահութիւն ունի Պատրիարքին վրայ , այս վստահութիւնն անուղղակի կերպիւ կը տարածի նաև իւր ընտրած խորհրդականին վրայ . ուստի կողմէնք Ս. Հայրն՝ որ շնորհ իւր առաջարկութեան վրայ . արդէն իւր ուզածը կատարուածի պէս է : Իսկ երբ ինք դուրս երթայ , հարկաւ իւր խորհրդականն իւր անզրարան պիտի ճանչցնէ Բ. Գրան , և հետևապէս ընդհ. ժողովին ալ :

**ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՑ.** — (Ատենապետ Քաղ. ժողովոյ)

Սրբազան Պատրիարքը թերևս կրկարծէ թէ իւր խորհրդականը հաստատուած չէ . սխալ է այս . խառն ժողովը հաստատուած է գոյն . իսկ Նորին Սրբազանութիւնն այժմ կուզէ երկրորդ հաստատութիւն մը աւանդ Ազգային ժողովին , արդեօք ինչ նպատակաւ . եթէ ճանարդարութիւն ընել միտքը դրած ըլլալուն համար է , ապիկա կրնայ ժամանակին խառն ժողովոյ խմբակնել և սա ալ իւր կողմանէ պէտք եղած դիւրութիւններն ի գործ կը դնէ , եթէ հարկը պահանջէ Ազգային ժողովոյ ալ կը դիմէ : Բ. Գրան ալ կրնայնէ և խորհրդականն ի պաշտօնէ կը ճանչցնէ որ որ հարկ է : Ուստի վերջացնելը այն խնդիրն ըսելով որ խորհրդական սրբազանն ինչպէս մինչև ցարդ , նոյնպէս և այսուհետեւ կրնայ շարունակել իւր պաշտօնը :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ.** — Քօլջեան կֆէնտի առաջարկութիւնը կրնա՞նք և կը խնդրենք որ բռնի դրուի :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ.** — Քօլջեան կֆէնտի առած բացատրութեան վրայ , միջադէպը գոյնը համար ժողովոյ կամեցը պիտի դիմեմ :

**ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ.** — Իմ առաջարկութիւնս հաս կը յանդի թէ իմ ճամբորդութիւնն ըրած ատենս խառն ժողովոյ հետ խորհրդական արտօնութիւն պիտի ունենայ Ազգային ժողովը գումարելու , թաղիքը դրելու և ըն : Ս. յս կէտը բռնարկեցէր :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ.** — Սրբազան Հայր , Չեր և մեր մէջ եղած տարբերութիւնը միայն սա է . դուք կուզէք Ազգային ժողովին բղխեցնել ձեր խորհրդականին պաշտօնը , իսկ մեր կրնանք թէ Պատրիարքութեանն միայն կը բղխի նա . և սրովեաւ խորհրդական սրբազանին մինչև ցարդ վարած պաշտօնէն դուք և Վարչութիւնը դո՛ւ եղած էք , մեր ալ դո՛ւ ենք ըսելով կամեցնենք . սխալաբ է մեր ընելիքը :

**ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ.** — Ըսել է թէ երբ պէտք ըլլայ տեղապահ մը դնել և տար համար ժամանակ շունենալ Ազգային ժողովը դու՛մա

րել , այժմէն արտօնութիւն առած կրնամ պէտք եղածն ընելու . սխալ է իմ ուղղութիւնս :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ.** — Ս. յո՛ւ . Չեր Սրբազանութիւնն իւր ճամբորդութեան սրբազային մէջ կրնայ ըստ սահմանադրութեան խառն ժողովով պէտք եղածը կարգադրել : Բ. Գրանն այս միջադէպը գոյնուած նկատելով կամեցնենք Մերեմգուլի կֆէնտի առաջարկութեան , որ ետքի թողուցու :

Առաջարկարիւն Մերեմգուլի կֆէնտի

Մերեմգուլի կֆէնտի կողմէ մատուցեալ յետագոյ առաջարկութեան զիրը կարդացուցուցաւ .

**Նկատելով Ս. Նախագահ Հօր պահած չափաւորութիւնն իւր պատասխանին մէջ .**

**Նկատելով Նորին Սրբազանութեան տուած յոյսերն ու խրատած համբերութիւնը :**

Նկատելով ընդհանուր արեւելից ներկայ վիճակն , որոյ բախտն այս պահուս Գերլինի մէջ գումարեալ արքայաժողովէն կախումն ունի .

Նկատելով որ մեր ևս արեւելից մէջ կը գտնուիմք և անոր մի մասը կը կազմեմք .

Նկատելով որ այս անորոշ վիճակին մէջ մեր ժողովն ալ չէ կարող կատարեալ դիտակցութեամբ գործելու .

Ժողովս ներկայ շրջանի նիստերը կը յետաձգէ մինչև այն ատեն՝ յորում Ս. Նախագահ Հայրն հարկ տեսնէ Ազգ. Ժողովս գումարելու :

**Յ. ՄԵՐԵՄԵՄ-ԳՈՒԼԻ**

**ՁԱՅՆԵՐ.** — Բռնի դրէք :

**ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՑ.** — Ասանց վիճարանութեան բռնի չղրուի :

**ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՑ.** — (Ատենապետ Քաղ. ժողովոյ) Պէտք է գիտնալ որ Վարչութեան երկու ժողովոյ ալ հրամարտական կոյ դիտակցութեան զրտանքանին վրայ . և սրովեաւ Մերեմգուլի կֆէնտի ժողովոյ նիստերը յետաձգել կատարել : Ժողովը նախ ստորագոր է նոր Վարչութիւնն ընտրել և ապա իւր նիստերը դադարեցնել : Կը յիշեցնեմ որ սուրբի վերջին օրէն մեր պաշտօնը լրացած է . օրէնքը դադարեցուցած է զմեզ գործելէն :

**ՏԱՅՅԵՆՈՍ ԵՊՍ.** — Ժողովի վաւերան խնդիր կըլլայ ներկայ ստորագոյնց պատճառաւ . Մերեմգուլի կֆէնտին է որ կատարելէ այն վաւերանը . ըստ իս կամխաճաս է այս առաջարկութիւնը , տակաւին ժամանակը չէ ժողովը վաւերելու . դեռ նախաքննիչ դիտանայ ընտրութիւնը պիտի ըլլայ . նոյնպէս Վարչութեան հրամարտականը կոյ որ պիտի կարգացուի և պէտք եղածը տնօրինուի այս մասին : Եւ սրովեաւ օրը տարածամած է , և չենք կրնար այսօր ոչ նախաքննիչ դիտանայ ընտրութիւնը կատարել և ոչ Վարչութեան հրամարտականին վրայ խորհրդ . ուստի երկրորդ նիստ մ'ընել անհրաժեշտ ըլլալով , կատարելով որ 8 օրէն սրբազանի ցանկ մը բերէ դիտանը նախաքննիչ դիտանայ ընտրութիւնը կատարելու համար , և Մերեմգուլի կֆէնտի վաւերանն առաջարկութիւնն ալ յաջորդ նիստին վիճարանութեան նիստ ընելու պայմանաւ այսօր դոյնենք ատենանը :

**ՁԱՅՆԵՐ.** — Այո՛ւ . այո՛ւ :

**ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.** — Ե՛րբ պիտի դու՛մարի յաջորդ նիստը :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ.** — 15 օրէն :

**ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.** — Հրամարեալ կրօն . և Քաղ. ժողովները պիտի շարունակեն իրենց պաշտօնը :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ.** — Անտարակոյս պէտք է

որ շարժանակն մինչև իրենց յաջորդն ընտրուի  
ու հաստատուի :

ՔՐԻՍՏԻԱՆ Ա. ԷՖ. — Ես իմ անձիս հա-  
մար չեմ կրնար խորտ առլ :

Ստեանը գոցուեցաւ ժամ 10 քառորդ  
անցնելով :

ԱՏԵՆԱԳՊԻՐ                      Գ. ԱՏԵՆԱԳԵՏ  
Հ. Ս. Սրախաճեան              Յ. Նարեան



ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Խորեն Եպիսկ . Մխիթարեան Ա. ԱՅՆԱԳՈՏ
2. Յակոբ Վարդ . Փարապեան Ա. ԱՅՆԱԳՈՐ
3. Աթանոս քհնյ Գարժայեան
4. Արամատկէս » Գարժայեան
5. Գարրիէլ Ա. Գ. Բ. Չիչիքճեան
6. Գէորգ » » Արճրունի Ա. ԱՅՆԱԳՈՏ
7. Գրիգոր » » Աթիեան
8. Զարարիա ԲՅ. Իզնատրեան
9. Իզնատրիա Ա. Գ. Բ. Մանուկեան
10. Խաչատուր ԲՅ. Տ. Գարրիէլեան Ա. ԱՅՆԱԳՈՐ
11. Մեարտիկ » Ե. Ե. Երէցեան
12. Միքայէլ » Գ. Վարժապետեան
13. Յովհաննէս Ա. Գ. Բ. Մկրեան
14. Պետրոս ԲՅՆ. Փարապեան

ԲԱԶՄԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Աւետիս ԷՓ. Բօլոլեան Ա. ԱՅՆԱԳՈՏ
2. Էլիսա » Զայեան Ա. »
3. Մատթէոս Ծ Ալֆսանեան Ա. ԱՅՆԱԳՈՐ
4. Գէորգ » Բըլլճճեան Ա. »
5. Սրէլ » Կիւրղէնիեան
6. Գէորգ » Փանտեան
7. Ենովք » Տէմիրճիպալեան
8. Մարտիրոս » Միւհէնտրեան
9. Յակոբ » Զօպանեան
10. Յարութիւն » Ֆրնարդեան
11. Յարութիւն » Թիրատեան
12. Նիկողոս » Աճանեան
13. Ռուբէն » Գրիգորեան
14. Ստեփանն » Պէլլիկճեան

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի . և Ղալաթիոյ Ս  
Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկալը և Հայ գրաւաճառաց քով :